# Ալիեւը վերջապես հասկացավ, որ հայերին նահանջ պարտադրող ուժ չկա աշխարհում

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ANS գործակալության հաղորդմամբ, Հազարամյակի գագաթաժողովին մեկնելուց առաջ Ադրբեջանի նախագահ Ալիեւը Բաքվի օդակայանում լրագրողներին հայտարարել է, որ նախատեսում է բանակցություններ վարել Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղիների շուրջ, բարձրացնելու է Ղարաբաղյան հակամարտության առնչությամբ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ընդունած բանաձեւերի ի կատար ածման հարցը: Նա նշել է, որ խնդրի կարգավորումը դժվարանում է մի շարք ուժերի կողմից կարգավորման գործընթացը խոչընդոտելու պատճառով: Ըստ նրա, աշխարհում չկա այնպիսի ուժ, որ ստիպի հայերին նահանջել գրավյալ տարածքներից: Ալիեւը նաեւ նշել է, որ գագաթաժողովում մտադիր է բարձրացնել Ադրբեջանին ամերիկյան կառավարական օգնությունը սահմանափակող 907 հոդվածի վերացման հարցը: